եթէ նա Ադրբէջանի կամ Վրաստանի բանուորա-գիւղացիական ապստամբութիւնը թիկունքից խանգարել ուզենայ»:

Կասեանի այս հաւաստիացումներն, ըստ երևոյթին, աւելի շուտ իր անձնական համոզումներից են բխում, քան իրական փաստերից: Անկարելի չէ, որ նա ինքը այդպէս էր մտածում, բայց կոնֆերենցիան, անշուշտ, աւելի համամիտ էր «Ալեքսանդրապոլի կազմակերպութեան ներկայացուցիչներին», որոնց առաջնորդ Աւիսը խիստ մարտական մի բանաձևով առաջարկում էր անմիջապէս «վերցնել իշխանութիւնը»: Կասեանը հաւատացնում է, որ այդ բանաձևը ո՛չ միայն չի անցել, այլ չի էլ քննուել, մինչդեռ Հայաստանի Կոմկուսի կենտրոնական պաշտօնաթերթ «Իզվէստիա»-յի 1922թ. 25 յուն. № 1-ում այդ բանաձևը տպւած է, որպէս խորհրդակցութեան կողմից ընդունւած և հայ կոմունիստների համար պարտադիր մի որոշում: Ցետագայ դէպքերն էլ դարձան Աւիսի բանաձևի ուղղութեամբ, և Կասեանի հոգեշահ խորհրդածութիւնները «դանդւածի օբիեկտիւ կացութեան», «երկրի իրական պայմանների» ու «տնտեսական-դասակարգային ստրուկտուրա»-յի մասին միայն դայլի շարականներ էին «մեր դոկտրինեօրների, դիալեկտիկօրէն մտածելու շնորհքից զրկւածների և ձախութեան հիւանդութեամբ բռնւածների համար»:

Այդ երևում է և Աշ. Յովհաննիսեանի վկայութիւնից:

«Սովետիզացիայի խնդիրը, ասում է նա, պարտաւորիչ էր ամենից առաջ Կոմունիստական Կուսակցութեան Հայաստանի Կոմիտէի—Արմկոմի—համար: Հայաստանի Կոմունիստական կազմակերպութիւնների գաղտնի կոնֆերանսը, որ տեղի ունեցաւ Երևանում, 1920 թւի յունւարին, ընդունել էր թէզիսներ այն իմաստով, որ կարմիր բանակի մերձեցման և հարևան հանրապետութիւնների յեղաշրջում լինելու դէպքում պէտք է առաջադրել Հայաստանի սովետիզացիայի խնդիրը: Վերահաս դէպքերը հարկադրում էին նախապատրաստական քայլեր անել այդ ուղղութեամբ: Հայաստանի Կոմիտէն ենթադրում էր, որ Ղազախն ու Ղարաբաղը, որպէս սահմանակից շրջաններ, յեղաշրջման յենակէտներ պէտք է դառնային Հայաստանի համար: Մինչ այդ պէտք էր խուսափել վճռական գործողութիւններից, բաւականանալ միայն կազմակերպչական աշխատանքով»:*)

Հայ կոմունիստների հակապետական շարժման դրդիչ և ազդանշան հանդիսացաւ Ադրբէջանի խորհրդայնացումը: Անտարակոյս, հայերը տեղեակ էին Ադրբէջանում սպասւող դէպքերին և իրենք էլ պատրաստւում էին այդ ուղղութեամբ:

Հայ բոլշևիկները որոշ յոյսեր կապում էին և այդ միջոցին Ղարաբաղում զարգացող պատերազմական գործողութիւնների, ինչպէս և ռուս ու մահմետական տարրերի դժգոհութեան հետ: Նրանց հաշիւը պարզ էր. շահագործելով սովը, տնտեսական ճգնաժամը, ռուսների ու մահմետականների կենտրոնախոյս բնազդները մի կողմից և միւս կողմից՝ բոլշևիկների արտաքին ոյժն ու կարմիր բանակի հմայքը՝ պայթեցնել Հայաստանի Հանրապետութիւնը: Զինւած ապստամբութիւնն ու քաղաքացիական կռիւը այդ նպատակին հասնելու ուղիղ ճանապարհն էր:

---

*) «Խորհրդ. Հայաստան», 1925թ., մայիս 1. № 98.